Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**
   Տաթևիկ Ռևազյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Իսպանիայի Թագավորություն, քաղաք Մալագա, 2019 թվականի օգոստոսի 28-ից սեպտեմբերի 1-ը

4. **Հրավիրող կողմը.**
   «Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանս» կազմակերպություն (այսուհետ՝ ԵԿԱԿ (ECAC))

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Գործուղման նպատակը՝ մասնակցություն ԵԿԱԿ քաղաքացիական ավիացիայի տնօրենների 68-րդ արտահերթ ժողովին (հատուկ հանդիպմանը):

6. **Քննարկված թեմաները.**
   ԵԿԱԿ քաղաքացիական ավիացիայի տնօրենների 68-րդ հատուկ հանդիպման հիմնական նպատակը՝ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) ասամբլեայի 40-րդ նստաշրջանին ընդառաջ նախապատրաստական աշխատանքների իրականացումն է: Քննարկվել են օրակարգով նախատեսված հարցեր և խնդիրներ, ներկայացվել են զեկույցներ, կայացվել՝ համապատասխան որոշումներ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Համաձայն միջոցառման օրակարգի՝ քննարկվել են քաղաքացիական ավիացիայի ոլորտում Եվրոպայի համար առաջնային հրատապության և ռազմավարական նշանակության խնդիրները, որոնք պետք է բարձրացվեն ԻԿԱՕ-ի ասամբլեայի 40-րդ նստաշրջանում և միջազգային հարթակներում, քննարկվել է ԻԿԱՕ-ի խորհրդի անդամների ընտրության հարցը: Օրակարգն ընդգրկել է քննարկումներ շրջակա միջավայրի պաշտպանության,

թռիչքային անվտանգության, ավիացիոն անվտանգության և օդային երթևեկության կազմակերպման թեմաներով:

Միջոցառման շրջանակներում Տաթևիկ Ռևազյանը մի շարք հանդիպումներ է ունեցել եվրոպական պետությունների ավիացիոն իշխանությունների ղեկավարների հետ, ԵՄ կառույցների պատասխանատուների հետ: Քննարկվել են եվրոպական փոխադրողների կողմից դեպի ՀՀ օդային փոխադրումների ոլորտի ազատականացման հարցերը և այն խնդիրները, որոնք կարող են ծագել մինչ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Եվրոպական Միության անդամ-պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի (այսուհետ ՀՀ-ԵՄ համաձայնագիր) ստորագրումը:

Ինչպես հայտնի է, մի շարք եվրոպական բյուջետային ավիաընկերություններ իրենց պատրաստակամությունն են արտահայտել դեպի ՀՀ փոխադրումների իրականացման հարցում, մինչդեռ ՀՀ-ԵՄ համաձայնագրի ստորագրման հետաձգումը խնդրահարույց կարող է լինել: ՀՀ-ԵՄ համաձայնագիրը նախաստորագրվել էր 2017 թվականի նոյեմբերի 24-ին՝ առանց «ԵՄ տարածք» հասկացության ձևակերպման և համաձայնագրի ստորագրման գործընթացը հետաձգվում է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության՝ ԵՄ կազմից դուրս գալու հետ կապված ընթացակարգերի պատճառով:

Խնդրին հնարավոր լուծում տալու ակնկալիքով հարցը քննարկվել է եվրոպական 8 պետությունների ավիացիոն իշխանությունների ղեկավարների հետ:

Հնարավոր աջակցություն ստանալու ակնկալիքով հարցը քննարկվել է նաև Եվրոպական Հանձնաժողովի Շարժունակության և տրանսպորտի հարցերով գլխավոր տնօրեն Հ. Հոլոլեյի հետ և նա իր պատրաստակամությունն է հայտնել աջակցել խնդրի լուծմանը, մասնավորապես՝ այն երկրների հետ փոխադրումների կազմակերպման հարցում, որտեղ առկա է դեպի ՀՀ օդային փոխադրումների հրատապ շուկայական պահանջ:

Հանդիպումներ և քննարկումներ են կայացել նաև Իսպանիայի ավիացիոն իշխանության ղեկավարության հետ, իսպանական ավիաընկերությունների ղեկավարների հետ, ընթացիկ հարցեր են քննարկվել, ինչպես նաև եվրոպական 14 պետությունների ավիացիոն իշխանությունների ղեկավարների հետ, իսկ ԵՎՐՈԿՈՆՏՐՈԼ կազմակերպության գլխավոր տնօրեն Էամոն Բրեննանի հետ քննարկվել է սույն թվականի նոյեմբերին ԵՎՐՈԿՈՆՏՐՈԼ կազմակերպությունում նախատեսված ժամանակավոր խորհրդի նիստից առաջ կազմակերպվող միջոցառումը, որին մասնակցում են շուրջ 40 երկրների ավիացիոն

իշխանությունների ներկայացուցիչներ, կազմակերպել միասին՝ միջոցառմանը տալով հայկական շունչ և ոգի:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Միջոցառման ընթացքում ԵԿԱԿ-ի անդամ-պետությունների կողմից ընդունվել է ԵԿԱԿ-ի գործունեությանը աջակցող ասոցիացիայի ստեղծման մասին որոշում, փոփոխություններ են կատարվել ԵԿԱԿ-ի կանոնադրության մեջ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Միջոցառման ընթացքում քննարկվեցին, առաջարկություններ ներկայացվեցին ԻԿԱՕ-ի ասամբլեայի 40-րդ նստաշրջանին ընդառաջ նախապատրաստական աշխատանքների իրականացման ուղղությամբ, քննարկվել են օրակարգով նախատեսված հարցեր, խնդիրներ, ներկայացվել զեկույցներ, կայացվել համապատասխան որոշումներ, մասնավորապես՝ շրջակա միջավայրի պաշտպանության, թռիչքային անվտանգության, ավիացիոն անվտանգության և օդային երթևեկության կազմակերպման թեմաներով:

Ստորագրությունը, ամսաթիվը.

X _____

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

17-ը սեպտեմբերի, 2019թ.